ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

SIRANUSH HARUTYUNYAN

THE ECOLOGICAL CULTURE OF THE PERSON AND THE PROBLEMS OF THE SABETY

Key words: *environmental safety, ecological situation, ecological Balance, ecological culture, national ecosystem, ecological worldview, formation of ecological consciousness*

The question of Inviroment security is connected with the major right of a man – the eight of living in natural pure invironment. The training of invironment culture, -the success of solving the invironmental questions, immensly depends upon people's awareness and culture.

The strategic goal of education and training should be the formation of the invironment mentality, which is based upon the environment know ledge, culture and ethics.

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԱրՊՀ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *մարդկային կապիտալ, տնտեսական աճ, առողջական վիճակ, կրթական մակարդակ, ժողովրդագրական իրավիճակ, արտագաղթ, աշխատանքի շուկա, կրթված գործազրկություն*

Հոդվածում դիտարկվում են ԱՀ-ում մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, ներկայացվում երկրում առողջապահության և կրթական մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշները, կատարվում համեմատական վերլուծություններ և հիմնավորվում մրցունակ աշխատուժի և բարձրակարգ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը երկրի տնտեսության բարգավաճման և տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հոդվածում ներկայացվում է նաև Արցախի աշխատանքի շուկային բնորոշ առանձնահատկություններից մեկը՝ «կրթված գործազրկությունը», որը բացատրվում է կրթական համակարգի և աշխատանքի շուկայի միջև գործող թույլ կապով:

Ժամանակակից տնտեսության ամենահրատապ հիմնախնդիրներից է մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործումը: Երկրում մարդկային կապիտալի զարգացումն առաջին հերթին կապված է կայուն տնտեսական աճի ձեռքբերման հետ: Արցախի Հանրապետությունում վերջին 10 տարվա ընթացքում ապահովվել է կայուն տնտեսական աճ,

որի միջին տարեկան ցուցանիշը կազմել է մոտ 10%: 2016 թ. հունվարի դրությամբ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն հանրապետությունում կազմել է 1 մլն 414,3 հազ. ՀՀ դրամ կամ շուրջ 3 հազ. ԱՄՆ դոլար, ինչը մոտ 4 անգամ գերազանցում էր 2006 թ-ի մակարդակը:



Գծապատկեր 1. ***ՀՆԱ փոփոխությունը 15 տարվա կտրվածքով***[1]

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՀ տնտեսության նման հաջողությունը հիմնականում պայմանավորված է իրականացված շուկայական բարեփոխումներով՝ հատկապես ֆիսկալ քաղաքականության ոլորտում: Հանրապետության տնտեսության զարգացման գործում նաև շատ մեծ դեր են ունեցել և շարունակում են ունենալ արտասահմանից ստացվող տրանսֆերտները: Այդուհանդերձ, չնայած նշյալ ձեռքբերումներին, երկրում տնտեսական աճն ապահովվում էր հիմնականում առանց տնտեսության արդյունավետ և հեռանկարային ոլորտների զարգացման: Այդ առումով, անհրաժեշտություն է առաջանում տնտեսական աճն ապահովման նոր ուղիների ներդրման, որը պետք է ուղղված լինի տնտեսության մրցունակ ճյուղերի բացահայտմանը և արտահանելի հատվածի զարգացմանը:

Մարդկային կապիտալի զարգացման կարևոր բնութագրիչներից է մարդկանց առողջական վիճակը: Արցախում բնակչության առողջապահության հարցը գտնվում է դեռևս ոչ պատշաճ մակարդակի վրա, մանավանդ գյուղերում:

Դիտարկումները ցույց են տալիս, որ գյուղական վայրերում չկան բժիշկներ, դեղամիջոցներ, բուժկետերն ապահովված չեն որակյալ կադրերով: Առողջապահական հիմնարկները և ներուժը հիմնականում կենտրոնացված են հանրապետության քաղաքներում (Ստեփանակերտում՝ բժիշկների 72.5%-ը, ստացիոնար բուժհիմնարկների 42.9%-ը, հիվանդանոցային մահճակալների 62.8%-ը, ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների 34.6%-ը):

[1] Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:

Ձևավորված իրավիճակն իր հակասական ազդեցությունը դրոշմեց ԼՂՀ բնակչության վերարտադրության ողջ ընթացքի և օրինաչափությունների ձևավորման վրա: Նվազեց ծննդաբերությունը, որը և բացասաբար ազդեց բնակչության վերարտադրության վրա: Ծնելիության գործակցի նվազումը և մահացության աճը պայմանավորեցին Արցախի բնակչության թվի նվազումը: Այսպես՝ եթե 1985 թ. բնակչության թիվը կազմում էր 173.6 հազ. մարդ, ապա 1995 թ. դա կրճատվել էր և կազմում էր ընդամենը 122.6 հազ. մարդ: Նաև նշենք, որ 1989 թ. ԱՀ-ում անցկացված վերջին խորհրդային մարդահամարից հետո բնակչության թիվը նվազել է շուրջ 44 հազարով, իսկ 2015 թ. մարդահամարի արդյունքներով կազմել է 145.1 հազ.[1]:

Վերոնշյալ իրադարձություններն ավելի քան մտահոգիչ են և անկասկած իրենց բացասական ազդեցություն են թողնում երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա, ավելանում է արտագաղթողների թիվը, ինչը պետության և ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ի թիվս այլ պատճառների, ԱՀ-ում միգրացիայի դրդապատճառներ են շարունակում հանդիսանալ աշխատանք փնտրողների մասնագիտական կարողություններին համապատասխան աշխատատեղերի բացակայությունը և ցածր աշխատավարձը: Ըստ էության, Հայաստանից և ԱՀ-ից մեկնած տղամարդկանց մեծամասնությունը երկիրից հեռանում է գործազրկության և նյութական դժվարություններից դրդված: Մեկնողների թվում կան նաև այնպիսիներ, ովքեր բարեկեցության հետ խնդիրներ չունեն, սակայն ձգտում են ավելիին: Ինչպես վերջին երկու տասնամյակում, այնպես էլ ներկայումս միգրացիոն հիմնական ուղղությունը ԼՂՀ-ից ուղղված է դեպի ՀՀ, ՌԴ, Անկախ պետությունների համագործակցության այլ երկրներ: Արտաքին միգրացիայի բացասական ազդեցությունը վերարտադրողական տարիքի անձանց՝ մասնավորապես տղամարդկանց տևական բացակայությունն է ընտանիքներից, որն ուղղակիորեն ազդում է հատկապես բնակչության վերարտադրողական վարքագծի վրա: Այդ հանգամանքով պայմանավորված՝ անբարենպաստ փոփոխությունների են ենթարկվում հանրապետության բնակչության սեռատարիքային համամասնությունները: Ընդ որում, բավարար երաշխիքներ չկան, որ արտերկրում կուտակվող աշխատանքային միգրանտների որոշակի մասն ի վերջո չի մնա մշտական բնակության և, տանելով ընտանիքը, չի խաթարի արտաքին միգրացիոն գործընթացների հարաբերական կայունությունը:

Ինչ վերաբերվում է ԱՀ ներքին միգրացիային, ապա այն հանգեցրեց գյուղական շրջանների բնակչության կենտրոնացմանը շրջկենտրոններում և մայրաքաղաքում: Դրա հիմնական պատճառը գյուղական շրջանների և քաղաքների, հատկապես՝ մայրաքաղաքի միջև աշխատանքային շուկայի, կրթական հնարավորությունների, կյանքի որակի անհամաչափությունն է: Դեռևս ԱդրԽՍՀ կազմում գտնվելու ժամանակաշրջանում ԼՂԻՄ-ում բարձր էր ուրբանիզացման մակարդակը: Քաղաքային բնակչության քանակի գերակայությունը բնակչության ընդհանուր թվում 1989 թ. մարդահամարի արդյունքներով կազմել է 51.7%: Այդ գործընթացը շարունակվեց և կայուն աճ արձանագրեց նաև անկախացումից հետո: ԱՀ բնակչության 56.8%-ը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ քաղաքաբնակ է,

[1] ԼՂՀ 2015 թ. մարդահամարի արդյունքները, Ստեփանակերտ, ԼՂՀ ԱՎԾ, 2016:

43.2%-ը՝ գյուղաբնակ: Վերջին յոթ տարիներին քաղաքային բնակչության թվի տեսակարար կշռի միջին տարեկան աճը կազմել է 0.6 տոկոսային կետ: 2009-2015 թթ. քաղաքային և գյուղական բնակչության արձանագրված մասնաբաժինները միջին հաշվով կազմել են համապատասխանաբար՝ 54% և 46%՝ ընդգծելով բնակչության քաղաքային և գյուղական բաշխվածության կայունության բարձր աստիճան[1]:

Դիտարկումները ցույց են տալիս, որ գյուղական բնակչության կենտրոնացումը քաղաքներում անդառնալի տնտեսական կորուստների պատճառ է դառնում այն երկրներում, որոնք ունեն համեմատական առավելությունների իրացման հնարավորություններ գյուղատնտեսության ոլորտում: Այս առումով, ակնառու օրինակ է նաև Արցախը: ԱՀ հետագա ուրբանիզացումը սպառնալիք է ներկայացնելու ազգային անվտանգության համար: Դա կապված է բնակչության ոչ համակարգված տարաբնակեցման, գյուղական շրջաններում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման, սահմանամերձ գյուղերի ամայացման վտանգների հետ: Այսօր երիտասարդությունը չի ցանկանում գյուղում մնալ՝ դա բացատրելով բնակարանային խնդիրներով, վատ կենցաղային պայմաններով, ենթակառուցվածքների թերզարգացածությամբ, հեռահաղորդակցության, ժամանցի պայմանների բացակայությամբ, կրթական ծրագրերի անհասանելիությամբ, պետության հասարակական-քաղաքական կյանքում գյուղի երիտասարդության ոչ բավարար ներգրավմամբ: Գյուղատնտեսության զարգացման խնդիրների լուծումը Արցախի շրջանների և գյուղական վայրերի զարգացման գործում կդառնա երիտասարդության գործուն մասնակցության ապահովման նախապայման:

Մարդկային կապիտալի զարգացման կարևորագույն պայմաններից մեկը կրթական մակարդակի մշտական բարձրացումն է: Արցախի կառավարությունը անկախության 25 տարիներին մի շարք միջոցառումներ է ձեռնարկել կրթությունը զարգացնելու ուղղությամբ: Հանրապետությունում կրթության և գիտության գծով պետական բյուջեից կատարված ծախսերը 2016 թ-ին կազմել են 12986.1 մլն դրամ՝ գերազանցելով 2006 թ. ցուցանիշը շուրջ 4 անգամ: Սակայն 2016 թ. 2015 թ. կրթության ոլորտին հատկացված ֆինանսական միջոցների համեմատությամբ դիտվել է 4,09% նվազեցում: Նման իրավիճակի ձևավորման վրա հետք են թողել ապրիլյան իրադարձությունները:

Արդի պայմաններում Արցախի աշխատանքի շուկայի բնորոշ գծերից է «կրթված գործազրկությունը»: Այն բացատրվում է ոչ թե այն հանգամանքով, որ գործատուները նախընտրում են վարձակալել կրթություն և որակավորում չունեցող անձանց, այլ ավելի շուտ՝ կրթական համակարգի և աշխատանքի շուկայի միջև գործող թույլ կապով, որի արդյունքում շրջանավարտների թիվը և ձեռք բերած մասնագիտությունները չեն համապատասխանում տնտեսությունում առկա պահանջարկին: Մյուս կողմից՝ որակավորում և մասնագիտություն ունեցող գործազուրկների մեծ տեսակարար կշռի առկայությունը ընդհանուրի մեջ վկայում է Արցախում մտավոր ունակությունների ցածր շուկայական արժեքի մասին: Այդ առումով, կրթության ոլորտը դեռևս զգայուն չէ աշխատանքի շուկայի փոփոխությունների հանդեպ:

[1] ԼՂՀ 2015 թ. մարդահամարի արդյունքները, Ստեփանակերտ, ԼՂՀ ԱՎԾ, 2016:



Գծապատկեր 2. ***ԱՀ կրթական ոլորտի ծախսերի դինամիկան 2009-2015 թթ. (հազ. դրամ)***[1]

Գործազրկությունը, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում, նշանակում է ԱՀ-ում ավելի ու ավելի սակավացող մարդկային կապիտալի ռեսուրսների անբավարար մակարդակի օգտագործում: 2015 թ. գործազուրկների թվի 9.8%-ը պատկանում է 16-24, 21.2%-ը՝ 25-29, 18.7%-ը՝ 30-34, 21.5%-ը՝ 35-44, 15.4%-ը՝ 45-54, 13.4%-ը՝ 55-ից բարձր տարիքային խմբին[2]:

Աշխատանք փնտրողների, մասնավորապես՝ գործազուրկների թվում զգալիորեն գերազանցում են կանայք (2015 թ.՝ 94.9%): Կանանց շրջանում զգալի են նաև տնտեսապես ոչ ակտիվները, որը հիմնականում կապված է անչափահաս երեխաների խնամքով պայմանավորված տնային զբաղվածության հետ: Բնակչության շրջանում վերարտադրողական վարքագծի վրա որոշակի բացասական ազդեցություններ են թողնում գործարար և վարձու աշխատանք ունեցող զբաղված կանանց աշխատանքային և ծնողի պարտականությունների համատեղման խնդրի լուծված չլինելը: Այս իրողության հետ կապված հիմնախնդիրները հատկապես սրվում են այսօր՝ տնտեսության գլոբալացման պայմաններում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ եթե 18-20 տարիքային խմբերում կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության մակարդակը գրեթե հավասար է, ապա առաջին երեխայի ծնունդը հարկադրում է կանանց դուրս գալ աշխատանքից և զբաղվել երեխայի խնամքով: Շատ դեպքերում հաջողակ, բավական բարձր վարձատրվող կանայք կանգնած են լինում ընտրության առջև՝ ամուսնությո՞ւն, թե՞ կարիերա: Հաճախ կանայք ընտրում են վերջինը:

Երեխաների խնամքի ծառայությունների բարելավված հասանելիությունը և մատչելիությունը կարող են օգնել ավելացնելու կանանց աշխատուժի մասնակցությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մանկահասակ երեխաներ (0-5 տարեկան) ունեցող կանայք, նույն տարիքի, կրթության և տնային տնտեսությունների կազմով, սակայն মান-

[1] ԱՀ վիճակագրական տարեգիրք, 2009-2015 թթ.:
[2] ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին, Ստեփանակերտ, ԼՂՀ ԱՎԾ, էջ 51:

կահասակ երեխաներ չունեցող կանանց համեմատությամբ, տնտեսապես ակտիվ լինելու՝ 17%-ով ավելի քիչ հավանականություն ունեն: Այս արդյունքն ինչ-որ չափով կարող է պայմանավորված լինել կանանց մի մասի՝ չաշխատելու և երեխաներին մեծացնելու ընտրությամբ, սակայն, մյուս մասի դեպքում՝ երեխաների որակյալ խնամքի հնարավորությունների բացակայությամբ: Հետևաբար՝ երկրում երեխաների խնամքի ծրագրերի որակի ու մատչելիության գնահատումը և այդ ծառայությունների ընդլայնման համար տարբերակների մշակումը կարող են օգնել աշխատուժի մասնակցության ավելացմանը:

Վերլուծությունից ակնհայտ է, որ բնակչության առողջական վիճակի բարելավումը, մրցունակ աշխատուժի և բարձրակարգ մասնագետների պատրաստումը ոչ միայն երկրի տնտեսության զարգացման ու բարգավաճման, այլև տնտեսական անվտանգության ապահովման հիմնական և անհրաժեշտ գործոններ են:

РУЗАННА МАНГАСАРЯН

ПРОБЛЕМЫ ЭФФЕКТИВНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА В АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКЕ

Ключевые слова: *человеческий капитал, экономический рост, состояние здоровья, уровень образования, демографическая ситуация, эмиграция, рынок труда, образованная безработица*

В статье рассматриваются основные проблемы эффективного использования человеческого капитала в Арцахской республике, представлены основные показатели, характеризующие уровень здравоохранения и образования в стране, проводится сравнительный анализ и обосновывается необходимость подготовки конкурентоспособной рабочей силы и высококвалифицированных специалистов для экономического процветания и экономической безопасности страны. В статье представлена также одна из особенностей рынка труда в Арцахе - «образованная безработица», что объясняется слабой связью между системой образования и рынком труда.

RUZANNA MANGASARYAN

THE PROBLEMS OF EFFECTIVE USE OF HUMAN CAPITAL IN THE REPUBLIC OF ARTSAKH

Key words: *human capital, economic growth, state of health, educational level, demographic situation, emigration, labour market, educated unemployment*

The article examines the main problems of effective use of human capital in the Republic of Artsakh, presents key indicators that characterize the level of health care and education in the country, provides comparative analysis and justifies the need to prepare a competitive workforce and highly qualified specialists for economic prosperity and economic security of the country. The article also presents one of the peculiarities of the labour market in Artsakh - "educated unemployment", which is explained by the weak connection between the education system and the labour market.